




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



5
Г12

ՀԵՏՈՄԻ

Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ.

ՄՅԱՍԻՐԱՆԻ
ԱՆՈՒՆ
ՅԵՐԿ. ԱԿՈՒՄԲԻ
ԳՐԱԴԱՐԱՆ



891. 895

9 - 13

պր.

30 MAY 2011

ՀԱՅԵՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻՆՑԵՔ.

Ռ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հ Ե Ր Ո Ս Ը

(ՊԱՏՄՎԱԾՔ ԶԱՅԼԱՄԻ ՄԱՍԻՆ)

1006
24712



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ—№ 12

ՅԵՐԵՎԱՆ—1924.



Հ Ե Ր Ո Ս Ը

Հյուսիս-արևելյան Աֆրիկայի անապատում, ն. ավազիսի մոտերը, իրիկնադեմին յերևացին մի խումբ ջայլամներ. նրանք շտապով վազեցին դեպի ջուրը: Յերբ հասան, վոմանք կանգնած մնացին ավին ու այնտեղից, իրենց յերկար վզները պարզած՝ սկսեցին ջուր խմել: Վոմանք, ավելի բաշերը, ուրախ-ուրախ կշկշալով ջրի մեջ մտան՝ զովացնելու համար իրենց տաքացած մարմինը: Յերեկվա տոթը, հիրավի, շատ եր հոգնեցրել նրանց, անապատի այրող արևն ել թմրեցրել: Յերկար ժամանակ խմելու ջրից զրկված՝ այժմ զովանում եյին, նոր ուժ առնելու և ապա շարունակելու համար ճանապարհորդությունը:

Ջրի մեջ թաղված ամբողջովին, ջայլամները գլուխներն եյին միայն յերևացնում. և ուրախ եյին, վոր վերջապես զովացան:


Նրանց տրամադրությունը շատ լավ եր. բավականությունից աղաղակում, ճայնում եյին, թևերով թափահարում:

Մինչդեռ այդպես ամբողջ յերամբ զովանում եր,

Տիբատ 2000

Պետրատի առաջին տպարան Վաղարշապատում.

միջանիսը ափին կանգնած՝ ամենայն ուշադրությամբ հսկում էյին, իրենց խոշոր աչքերը հառած դեպի անապատի հեռուները, դեպի անեզր տարածությունը, ապա դարձնում էյին իրենց գլուխն այս ու այն կողմ, վորպեսզի ավելի լավ դիտեն շրջակայքը:



Գիշ հետո ջրի մեջ զովացած ջայլամներից միջանիսը յեկան փոխարինելու այդ պահապաններին: Բայց պահապանների վրա վստահ չէյին մյուս ջայլամները: Մի կասկածելի ձայն եր լսվում թե չե, բոլոր ջայլամները վզները դուրս էյին ցցում ջրից, իրանց ուշադրությունը լարում և մի վայրկյան արձանանում: Հետո ապահովված, ելի խորասուզվում էյին ջրի մեջ:

Ովազիսի լճից գետ եր սկսվում: Նա այնքան առատաջուր եր, վոր նրա ափերը հաճախում էյին բազմատեսակ կենդանիներ:

Լսվեց սմբակների տրոփյուն: Շուտով ջրի մոտ յերևաց մի նոր խումբ: Թեև ջայլամները առաջին պահ դողացին, բայց շուտով ճանաչեցին, զգացին ծանոթ

տրոփյունը. նոր կենդանիների գալուստը ջայլամների ն չանհանգստացրեց: Մի րոպե, հիրավի, շարժեցին՝ կարծես փախուստի դիմելու, բայց յերբ տեսան շերտավոր վայրենի ձիերի—գեբերի յերամակը, հանգրստացան և շարունակեցին իրենց զվարճությունը:

Յեկող գեբերի խմբի մեջ յերեք ջայլամներ ևս կային:

Նրանք յետ չմնալով իրենց բարեկամ գեբերից՝ նույնպես դիմել էյին դեպի ջուրը:

Արևն այդ միջոցին մայր եր մտնում: Հորիզոնը կարմրում եր: Փշում եր մեղմ և զով բամի: Լսվում եր զանազան կենդանիների խառն աղմուկը: Որվա տաքից հոգնած դեպի ջուրն էյին վազում անեզր անապատի բնակիչները: Ավելի բարձր ճշում էյին թռչունները:

Հանկարծ մի անսովոր լուրժյուն պապանձեցրեց այդ բոլորը: Զեբերի մեջ իրարանցում ընկավ: Նրանց բարեկամ ջայլամները, վորոնք ափին արածում էյին, յերբ զգացին վտանգը, անհանգիստ կերպով սկսեցին խառնվել իրար, վզները յերկարացրին, տեսողությունը սրեցին... ու մեկեն բարձր ճիշ արձակելով և թևերը թափահարելով՝ առաջ նետվեցին: Դա բավական եր, վոր գեբերի անհանգստությունն ավելի սաստկանար: Նրանք դուրս թռան ջրից ու հետևեցին ջայլամներին: Հարյուրավոր սմբակների տրոփյունն անցավ գետնի վրայով: Ողբ փոշիով լցվեց:

Զեբերի ընդհանուր փախուստից առաջ ջայլամների բանակումն ել զգացին վտանգը: Պահապան ջայլամները ժամանակին նշանը տվին: Իսկույն ջրի մեջ յեղածները դուրս նետվեցին և միացան ափում արածողներին, ապա ամենքն ել մեծ աղմուկով ու թևերը տարածելով սկսեցին վազել... Թռչունները, դաշտային

մանր կենդանիներն ել յետ չմնացին։ Ողբ դղրդաց ան-
թիվ թևերի թափահարումից։ Ինչպիսի աղաղակ, թևե-
րի բաղխում, վոտքերի դոփյուն, փռչի... Ամեն ինչ
իրար խառնվեց և անապատի անդորրությունը խան-
գարվեց։

Չայլամների յերամը սկզբում համախմբված եր-
վազում։ Բայց յերբ վտանգը ավելի մոտ զգացվեց,
կարգ ու կանոնը խանգարվեց, մոռացան միմյանց և
ամեն վոր ջանաց փրկել իր կյանքը միայն։ Ու գնացին
զանազան ուղղությամբ։

Փռչու ամպը անբաժան հետևում եր Չայլամներին։
Վազում եյին կենդանիները և ինչպես վազում։ Վոստ-
նում եյին յերեք արշինանոց թռիչքներով։ Յերկյուղից
և զայրույթից թևերը լայն բացած, յերկարավիզ գլուխ-
ները դեպի առաջ պարզած՝ ցատկում եյին։ Դեպի ուր
— իրենք ել լավ չգիտեյին։ Փախչել, վազել միշտ առաջ.
գուցե կարողանային վերջապես գնալ այնքան հեռու,
վոր թշնամին հոգնածությունից անկարող լիներ իրանց
հետապնդելու։ Այդ եր միակ փրկությունը։ Ուրիշ յելք
չկար։

Ահա այդ յերկյուղալից, խելքը կորցրած խմբերի—
արագավազ Չայլամների և շերտավոր զբերերի յետևից
ահագին ու թեթև վոստյուններով արշավում եյին
անապատի յերեք հաղթանդամ արքաներ...

Յերեք խոշոր առյուծներ, վորոնք վաղուց հետևել
եյին զբերերի և Չայլամների խմբին։ Սրեր մայր
մտնելու պես դուրս գալով իրենց թագստոցից, նրանք
ջրի կողմն եյին դիմել։ Լավ գիտեյին, վոր որվա տաքից
ուժասպառ կենդանիներն անպատճառ ջրի պիտի գնա-
յին։ Յերբ հեռվից զգացին զոհերի մոտ լինելը, առանց
տատանվելու շտապեցին այնտեղ։

Սկզբում, շնորհիվ իրենց մորթու դեղնավուն գույ-
նին,—վոր նման ե անապատի ավազին,—առյուծները
կարողացել եյին մոտենալ աննկատելի։ Բայց յերկա-
րավիզ ու սրատես Չայլամները նրանց տեսնելով՝ սկսե-
ցին փախչել։ Առյուծները շարունակեցին հետևել նրանց։

Ու անապատը լցվեց Չայլամների ընդհատվող յեր-
կյուղալից աղաղակներով և զբերերի խրխնջոցով։

Սակայն յերկար չտևեց այդ։



Շուտով լսվեց զբերերից մեկի մահամերձ ձայնը։
Նրա վրա յեր վոստնել առյուծներից մեկը, իր սրածայր
շարժուն ժանիքները խոր մխել վզի մեջ ու բաց չեր
թողել, մինչև վոր զբերը ծանր վիրավորված՝ իր
սոսկալի հեծյալի հետ փոքր ինչ ել վազելուց հետո՝
ուժասպառ ընկել եր գետին։

Այդ միջոցին մի ուրիշ կողմից լսվեց Չայլամներից
մեկի հուսահատ ճիչը։ Առյուծի թաթի ուժգին հարվա-
ծով նա ևս ընկել եր գետին։

Յերրորդ առյուծը դեռ հետապնդում եր իր զոհին։
Թեև ահագին վոստյուններով քանի գնում մոտենում
եր նրան, բայց Չայլամին չեր հասնում, վորովհետև նա

սլանում եր ավելի ու ավելի արագ: Վորքան ուժ ուներ՝ վազում եր: Իերանը հոգնածությունից բաց արած, յերկարավիզ գլուխը առաջ ցցած՝ սլանում եր նետի արագությամբ: Իզուր չեյին նրա վտարերը այնքան յերկար, ուժեղ և մկանուտ: Յեթե այդպիսի վտարեր չունենար, — կարո՞ղ եր այդքան արագ վազել: Զայրույթից թևերը պարզել եր, և բամբին տատանում եր նրա մեծ, թավ ու սպիտակ փետուրները: Թեև դրանք խանգարում եյին վազելին, բայց ինչ արած: Ու կենդանին իր հուզմունքը, մահալից յերկյուղը այլ կերպ չեր կարողանում արտահայտել, բան ճշալով:



Քանի գնում, նրա և առյուծի միջև յեղած տարածությունը ավելանում եր: Գետափը շատ հեռու յեր մնացել: Խոտավետ հարթությանը հաշորդել եր ավազուտ և փափուկ անապատը: Առյուծը դժվարանում եր այլևս վազել ավազի վրայով: Զայլամը, ընդհակառակը, սովոր եր ավազին: Ավազը վազելին այնքան ել չեր խանգարում: Նրա վտարերը յերկու մատ ունեյին. մատներն ել այնքան լայն եյին, վոր այնքան չեյին խրվում ավազի մեջ: Հանդիպած սրածայր բարերն ել չեյին կարող փնասել, վորովհետև մատները մաշկով եյին ծածկված: Յեվ այդպես, իր լայն մատների և նրանց

հաստ մաշկի շնորհիվ ջայլամի վազքը չեր դժվարանում և շիկացած ավազի տարությունից նա չեր նեղվում:

Յեվ այդպես ջայլամն այնքան հեռացավ, վոր առյուծն արդեն սկսեց տատանվել: Փոքր ինչ կանգ առավ, նայեց հեռուն, նորից վազեց: Բայց չգիտեր՝ հետապնդե՞լ, թե թողնե՞լ ու հեռանալ: Նրա վոստյունները փոքրացան հետզհետե: Շուտ-շուտ կանգնում եր ու կատաղում, վոր ձեռքից փախցրեց զոհը:

Վազում եր, բայց իր ու ջայլամի միջև յեղած տարածության մեծանալը նրան հուսահատեցնում եր:

Վերջապես կանգ առավ ու հոգնած մռնչալով, նայեց հեռացող ջայլամի յետևից: Ապա զայրույթից՝ պոչը յերերցրեց, թաթերով ավազը ճանկեց ու չորս կողմը նայեց: Յերբ շրջապատի ամայության մեջ ջայլամը այլևս աներևույթ եր դարձել, առյուծն այնպես մռնչաց, վոր արձագանգը լսվեց շատ հեռուներից:

Այնուհետև նա մի վերջին անգամ ել նայեց անհետացած ջայլամի կողմը և նորից սկսեց վազել:

Բայց իզուր եր: Զայլամն արդեն շատ և շատ հեռու յեր:

Այդպես եր, վոր ազատվեց մեր հերոս ջայլամը: Նրա բաջության և արագավազության համար անունը դնենք Հերոս և հեռուենք նրան:

Իսկապես հետաքրքիր ջայլամ եր Հերոսը: Բոլոր ընկերների մեջ նա աչքի յեր ընկնում իր մեծ հասակով և վտարերի ուժեղ մկաններով: Գեղեցիկ ել եր:

Վիզը մերկ եր փետուրներէից, իսկ թևերի ծայրին ուներ սպիտակ փետուրներ, վորոնք սովորականից ավելի փարթամ եյին ու խոշոր:

Յերբ ազատվեց Հերոսը առյուծից, ահագին պտույտ գործելով նորից վերադարձավ գետափը, բայց այս անգամ հեռու նախկին տեղից: Հասնելով, անցավ մյուս ափը և ելի հեռացավ: Յերբ բավականին առաջ եր անցել, կանգնեց, հանգիստ շունչ առավ, նայեց մթազնած հեռուն, ուր վոչինչ չեր յերևում: Հորիզոնի մեկ կողմը դեռ կարմրած եր, մթնշաղն արդեն պատել եր գետինը: Կարծես չհավատալով դրան, Հերոսը նորից գլուխը բարձրացրեց, յեռանկյունածև կտուցավոր գլուխն աջ ու ձախ դարձրեց ու հոգնած աչքերով հեռուն լավ հետազոտեց: Առյուծը չկար: Անապատի մի կողմում շարժվող մոխրագույն կետերն իր ցեղակիցները պիտի լինեյին անշուշտ:

Շատ չանցած՝ նա դարձյալ ընկերների մեջ եր: Այս անգամ ջայլամների խումբը փոքր եր:

Հերոսը մոտեցավ յերկու փոքրահասակ ջայլամների, նրանց հետ բարեկամացավ: Ապա յերեքը միասին առանձնացած սկսեցին արածել: Հերոսը յերկուսիցն ել գեղեցիկ եր: Թեև մյուսների պես մոխրագույն եր, բայց թևերի ծայրերի փարթամ սպիտակ փետուրները շատ եյին գեղեցկացնում նրան:

Այդ փետուրների համար ե ահա, վոր մարդիկ բազմաթիվ ջայլամներ են սպանում:

Հերոսի յերկու ուղեկիցները չունեյին սպիտակ փետուրներ, վոչ ել գեղեցիկ եյին, վոչ ել հաղթանդամ:

Նրանք եգեր եյին: Իսկ Հերոսը վորձ ջայլամ եր:

Անցավ բավականին ժամանակ այդ որվանից: Ջայլամները հաճախ եյին ընկնում անապատի գիշատիչների ձեռքը, բայց Հերոսը միշտ ազատվում եր: Նա իրեն ավելի ապահով եր զգում, յերբ գերբերի հետ եր



արածում: Հերոսին գերբերը դուրս չեյին անում: Ջայլամը նրանց ոգտակար եր լինում: Իր յերկար վզի և բարձր հասակի շնորհիվ գերբերից շուտ եր տեսնում մոտեցող թշնամուն և վտանգի դեպքում իսկույն վազում եր: Զերբերը նրան նայելով՝ նույնպես սկսում եյին փախչել: Յեվ այդպես կարծես Հերոսը նրանց համար պահապան լիներ: Բայց պահապան լինելը ջայլամին ել ոգտակար եր: Զերբերի մեջ լինելով՝ նա ավելի ապահով եր և հազիվ թե ընկներ կատաղած առյուծի ձանկը:

Յերկար չմնաց սակայն Հերոսը զերբերի մեջ: Պարունը բացվել էր: Գետինը տեղ-տեղ կանաչ խոտով էր զարդարվել. ամայի բնությունը գարնանային շունչ առնելով՝ կենդանացել էր: Չորս կողմից միջատների բզզոց էր լսվում. այս ու այն կողմ մողեսն էր պոչը յերերցնելով վազում... Բոլոր կենդանիներն ապագա ձագուկների հոգսով եյին զբաղված, բոլորն էլ բնի պատրաստություններ եյին տեսնում. շուտով ձվաներ պիտի ածեյին, իսկ ձվաներից ձագեր պիտի լույս աշխարհ գային:

Հիմա լավ և հարմար ժամանակն էր: Քանի թարմ խոտը կար, քանի կային բազմատեսակ միջատները, նորածնունդ ձագերը սովամահ չեյին լինիլ, առատ սնունդ կունենային և հանգիստ կաճեյին:

Հերոսն էլ ստիպված յեղավ զերբերին թողնելու: Ապագա սերունդի հոգսը նրան էլ զբաղեցրեց: Բավական ժամանակ էր, վոր եգերի հետ չեր արածում: Քիչ հետո նա բունը պատրաստեց. գետնում փորած մի լայն փոս էր դա: Եգերի ձու ածելու ժամանակը մոտեցել էր:

Մի որ Հերոսը բնի մեջ տեսավ յերկու մաքուր ձու: Մեծ եյին այդ ձվաները, ամեն մեկը հավի 24—25 ձվի չափ: Այդպիսի ձվաների քաջը շատ անգամ չորս գրվանքայի յե հասնում: Եգերից յուրաքանչյուրը յերկու որը մի ձու յե ածում:

Հերոսը բնիներնեռով աշխատում էր բնի մեջ յեղած ձվերը հարմար կերպով տեղավորել: Միքանի որից հետո բնի ձվերը 14 դարձան: Յերբ ձվաները շատացան: Հերոսը մոտեցավ բնին, ձվաները լավ տեղավորեց ու նստեց նրանց վրա:

Հերոսից տասնյակ քայլ հեռավորության վրա յերկում եյին միքանի ուրիշ բներ, վորոնց վրա նույնպես

նստած եյին վորձ ջայլամներ: Եգերը ազատ են լինում այդ պարտականությունից. նրանց գործն է միայն ձու ածելը: Յերբ ձու ածում, վերջացնում են, մնացած հոգսը բնկնում է այլևս վորձերի վրա: Այդպես է ջայլամների սովորությունը:

Հերոսը և նրա հարեան վորձերը միշտ չեյին տաքացնում ձվաները: Յերեկները, տաք ժամանակ, յերբ գնում եյին արածելու, թողնում եյին ձվաները և փոքր ինչ ավազով ծածկում: Անապատում ցերեկները շատ տաք է լինում, բայց գիշերները ցրտում է: Այնքան է ցրտում, վոր ձվաները պահպանել է հարկավոր: Ու վորձերն ամենայն սիրով նստում են բնի վրա և իրենց մարմնովը ձվաները տաքության մեջ պահում:

Պատահում է մեկ-մեկ էլ եգն է նստում: Այդ այն ժամանակ, յերբ վորձը յերկար նստելուց հոգնում է կամ սովածանալով թողնում է բունը, գնում սնունդի յետևից և կշտանալով նորից գալիս իր տեղը բռնում:

Յերբեմն Հերոսը որերով էր նստում բնի վրա, միայն միքանի բնդմիջումներ եր անում՝ սնունդ առնելու համար: Իր տեղում նա ապահով էր նստած: Փետուրների գույնը այնքան էլ պայծառ չեր, վոր հեռվից թշնամին նրան նկատեր: Նստած բոպեյին հեռվից նրա մոխրագույն մարմինը փոքր ինչ նմանվում էր կամ գետնից դուրս ցցված քարի կամ գորշ հողաբլուրի: Ճիշտ է, սպիտակ փետուրները խանգարում եյին, բայց մեր Հերոսը թագնավելու մասին շատ էլ չեր մտածում: Միևնույն է, բոլորովին թագնավել ամայի անապատում՝ անկարելի յե և յեթե նրա ուժեղ յեռանկյունի կտուցը չլիներ, կամ ավելի ուժեղ, յերկար ու արագավազ վորքերը—հազիվ թե կարողանար գիշատիչների ճանկերից ազատվել: Յերբ արևի կիզիչ ճա-

ռագայթներից շիկանում եր գետինը, Հերոսը նույնիսկ ցերեկը բնից չեր յեղնում: Բնում նստած, իր մարմնովը պահպանում եր ձվաները տաքից: Թեև ձվաները հաստ կեղև ունեյին, բայց շիկացած գետինը, արևի ուժեղ տաքությունը կարող եյին խաշել նրանց:

Սակայն հաճախ չեր պատահում այդ: Սովորաբար ցերեկները ձվաները ծածկում եր նա թեթև ավազով ու թողնում արևի տաքին: Յեւ ջայլամի գործը շարունակում եր արևը:

Անցավ մի ամիս: Առյուծները այլևս չեյին յերեւում անապատում: Այժմ նրանց փոխարեն մի ուրիշ, ավելի փտանգավոր և խորամանկ թշնամի հայտնվեց: Միքանի անգամ նրան տեսան ջրի ափին: Ծառի յետև եր կանգնում այդ թշնամին: Մի որ ել այն տեղից, ուր կանգնած եր նա, մի բան ֆշշալով յեկավ և Հերոսին մոտենալով, նրա վզի մաշկը թեթև քերթեց ու անցավ: Յավ զգաց թե չե Հերոսը՝ իսկույն փախուստի դիմեց:

Այդ որվանից սկսեց զգուշանալ:

Նոր թշնամին առյուծի նման չեր վազում, բացարձակ չեր հարձակվում: Մոտենում եր աննկատելի կերպով, կանգնում եր մի տեղ—ծառի, ժայռի յետևից, փոսի միջից մի այնպիսի բան եր բաց թողնում, վոր ֆշշալով և ողը ճղելով գալիս եր նրա վրա ու բարեբախտաբար առանց վնաս պատճառելու՝ անցնում: Միքանի անգամ միայն զգաց, վոր վզին կամ վոտքին մի բան կպավ ու թեթև ցավ պատճառեց: Հերոսը լավ լսողություն ունեւ: Հեռվից զգալով վտանգը՝ վիզը ժամանակին մի կողմն եր թերում—և այդպիսով փրկվում:

Սակայն շատ զայրացավ Հերոսը, յերբ իր այդ նոր թշնամին մի անգամ ել չթողեց նրան հանգիստ բնի վրա նստելու: Նա բոլորովին մտադիր չեր բունը թողնել, և արդեն պատրաստվում եր մենամարտելու թշնամու հետ, բայց վերջինս անհայտ պատճառով հանգիստ թողեց ջայլամին: Սակայն հետապնդումները չդադարեցին: Մի անգամ թշնամին փորձեց մոտիկից ջայլամին վնասել և փոշմանեց:

Այդ այսպես պատահեց: Հերոսը վերադառնում եր ջրից, յերբ հանկարծ դիմացի բլուրի յետևից առաջ յեկավ թշնամին: Ջայլամի նման յերկու վոտքի վրա յեր կանգնած և առանց փետուրների յեր: Դա մարդն եր: Ջեռքին մի թուկ եր բռնել և ուզում եր ջայլամի վրա ձգել, բայց Հերոսը ժամանակին կանգ առավ, սկզբում վախեցավ, փոքր ինչ շփոթվեց, չգիտեր ինչ անել, ապա հանկարծ վազեց վտանգի առաջ. և այնպես արագ կատարվեց այդ ամենը, վոր թշնամին չկարողացավ իսկույն հասկանալ ջայլամի մտադրությունը: Հերոսը հստավ թշնամուն թե չե, ել կտուցով, ել վոտքերով սկսեց խփել ու խփել: Մարդը աղաղակում եր. և ոգնություն կանչելով, վերջն արնաթաթախ գետին զլորվեց:

Հերոսի ուզածը հենց այդ եր: Սպանելու միտք չունեւ: Մարդուն այդպես լավ մի դաս տալուց հետո, փախուստի դիմեց: Քանի-քանի անգամ այդպես նա ազատվեց փորձանքից: Իզուր չեյին նրան հետապնդում: Նրա գեղեցիկ սպիտակ փետուրները հեռվից գրավում եյին մարդկանց:

Որ չեր անցնում, վոր նոր թշնամուն չհիշեր:

Առաջին մենամարտից յերեք որ անցած՝ Հերոսը ջրից վերադառնալիս նկատեց, թե ինչպես մի վորձ

Չայլամ բանդում, ավերում եր սեփական բունը, ձվերը
Չարդոտում և այս ու այն կողմը ցրում: Չգարմացավ
Հերոսը: Նրան հասկանալի չեր վորձ Չայլամի զայրույթը:
Հասավ իր բունը թե չե, լավ քննեց, նայեց բնի ամեն
կողմերը— թշնամին ձեռք չեր տվել: Չվաները իրանց
տեղում եյին: Գուցե ձվաներից գողացած լինեյին,
բայց այդ դժվար եր իմանալ: Թե վորքան եյին նրանք,
այդ նա չգիտեր: Չվաներն առաջվա պես թեթև կեր-
պով ծածկված եյին ավազով: Մի կասկածելի բան յե-
թե լիներ, վոր ապացուցեր, թե թշնամին դիպել եր
բնին— Հերոսն ել վերոհիշյալ վորձ Չայլամի պես պիտի
ավերեր իր բունը: Նրա բնին ձեռք չեր տված: Հերոսը
հանգիստ սրտով նստեց ձվաների վրա: Տաքուլթյուն եր
հարկավոր նրանց զարգանալու համար: Իսկ ողն արդեն
ցրտել եր: Մթնշաղը պատել եր գետինը:

Հիսուն որ եր անցել Հերոսի՝ բնի մեջ նստելուց:
Չվաներից դուրս գալ սկսեցին յերեք Չայլամիկներ, Հե-
րոսը ոգնեց նրանց հեշտությամբ ձվից դուրս գալու:
Փոքրիկները ձվից ազատվեցին թե չե, իրենց փափուկ
փետուրները փոքր ինչ թափահարեցին, զարմանքով
նայեցին, սկսեցին նախ այս ու այն կողմ ընկնել և
ապա գետնին պատահած բաները կտցահարել:

Հայրն ու մայրը սիրով հետևում եյին փոքրիկնե-
րին: Մենակ չեյին թողնում նրանց: Վորտեղ Չայլա-
միկները վազում եյին, այնտեղ ել շտապում եյին
ծնողները: Իսկ Չայլամիկները կապկի պես կտցահա-
րում եյին այն, ինչ վոր ծնողներն եյին կտցահարում:

Փոքրիկները ավելի շատ հորն եյին սիրում: Յերե հայ-
րը նստում եր բնին, նրանք վազում եյին մոտը և նրա
տաքուկ թևերի տակ անցնում:

Յերկու ամսից հետո Չայլամիկները մոխրագույն
փետրիկներով եյին զարդարված: Ծնողները շարունակ
հսկում եյին նրանց: Հոգսերը շատացան: Հիմա բացի
իրենց սեփական կյանքից, փոքրիկների կյանքն ել հար-
կավոր եր պահպանել: Բանի-բանի հարձակման փորձեր
յեղան— վոչինչ, լավ անցավ, ամենքն ել կենդանի
մնացին:

Մի անգամ ահա թե ինչ պատահեց: Գնացել եյին
Չրի: Մայրը փոքրիկների առաջն եր անցել՝ ճանապարհն
եր ցույց տալիս, իսկ հայրն ապահովության համար
փոքրիկների յետևից եր քայլում: Հանկարծ նետի ա-
րագությամբ վրա հասավ մի գիշատիչ թռչուն ու, այն
ե, պատրաստվում եր փոքր ինչ հեռու մնացող Չայլա-
միկին ճանկել, ծնողները ժամանակին նկատելով հար-
ձակվեցին, գիշատիչի վրա: Մի կողմից հայրը, մյուս
կողմից մայրը զայրացած այնպես կտցահարեցին, վոր
թշնամին փետրահան յեղած ու արնաթաթախ հազիվ
իր գլուխը կարողացավ փրկել:

Դեպքերից ամենավտանգավորը դա յեղավ:

Այնուհետև խաղաղ ու հանգիստ ապրեց Հերոսի
ընտանիքը: Չայլամիկներից յերկուսը սպիտակ փետուր-
ներով զարդարվեցին: Նրանց միակ պահասությունն
այն եր, վոր ինչ տեսնեյին գետնին՝ պիտի կտցեյին ու
կուլ տային: Չայլամներն ինչ ասես ուտում են՝ ել
բույս, ել միջատ, մողես, գորտ: Մեծերը մաքրազար-
դում են դաշտային մանր կաթնասուն կենդանիներ
և Չայլամիկների հիմար սովորությունն եր պատահած
բանի համը տեսնել և շատ անգամ առանց մտածելու

կուլ տալ Ծնողներից եյին սովորել: Այդպես եյին հայրն ու մայրը: Յեթե ջալամը գետնին գորտ ե տեսնում — կուլ ե տալիս, մողես — նույնպես, բզեզ — նույնպես, ապակու կտոր, ավազ, յերկաթի կտորտանք — առանց մտածելու այդ ել ե ստամորսը լցնում: Լավ ե, վոր ստամորսը դիմացկուն ե, չի վնասվում այդ դարմանալի սնունդից*):

Ինչո՞ւ յեն այդպես անում ջալամները: Ո՞վ գիտե, գուցե հիմարությունից. գուցե և այն պատճառով, վոր ամայի դաշտում այնքան սուղ ե սնունդը, վոր յերկար փնտռելը, սնունդի մեջ ընտրություն անելը շատ ժամանակ ե խլում: Ավելի հեշտ ե պատահածը արագ-արագ բերանը տանել. պատահամբ սնունդ ել կընկնի ստամորսը:

Խաղաղ ժամանակներն անցան: Զալամները շատացել եյին: Թշնամու թիփն ել որըստորե ավելանում եր: Որ չեր անցնում, վոր մարդ-փորսորդը չերևար: Զալամների սպիտակ փետուրները նրան հանգիստ չեյին տալիս:

Հերոսի յետևից ել ընկան: Նրան շատ եյին հետապընդում: Յեղածներից ամենամեծն եր նա, ամենագեղեցիկը, բայց միևնույն ժամանակ և ամենաուժեղը:

*) Պատմում են աղանատեսները, թե ինչպես մի ջալամի ստամորսից հանել են միքանի գրվանքա ավազ, շորի կտորտանք, յերկաթի կտորներ, պղնձե փողեր, յերկաթյա յերկու բանալի, 17 պղնձե և 20 յերկաթե մեխեր, գնդակներ, կոճակներ և քարի կտորներ: Մի ուրիշ ջալամ միմյանց յետևից միքանի կենդանի բադիկներ ե կուլ տվել:

Հեշտ չեր նրան բռնելը: Տարբեր վորսորդներ եյին յերևացել: Աֆրիկայի վայրենի բնակիչները վտրով եյին հետապնդում նրանց: Սակայն նորերը սկսել եյին թունավոր նետեր գործածել և ձի նստած հալածել:

Հասել եյին ծանր ժամանակներ: Մի որ ել, յերբ Հերոսը արածում եր միքանի ջալամների հետ, հեռվից լսվեց սմբակների դոփյուն: Զալամներն զգացին թըշնամուն և իսկույն ցրվեցին: Զիավոր վորսորդները սլացան ջալամների յետևից: Նրանց կողմից ողի մեջ պըտույտ գործելով դեպի ջալամները սլացան զույգ-զույգ թոկավոր մետաղյա գնդեր: Գնդերից յերկու գույգը փաթաթվեցին յերկու ջալամի վտրերին... Զալամները գլորվեցին ու բռնվեցին: Յերբորդ ջալամի գլուխը ջախջախվեց մետաղյա գնդից, և նա գլորվեց, մահվան վերջին ճիչն արձակելով:

Հերոսն ելի ազատվեց:

Յերկար հասակը, արագավազ վտրերը նրան միշտ փրկում եյին փորձանքից: Յեթե յերկար վտրեր, յերկար վիզ չունենար — թշնամու մոտենալը չեր իմանալ: Յեթե արագ վազը չլիներ, թշնամու հետապնդումից չեր ազատվի:

Ամեն որ ջալամները միքանի գոհ եյին տալիս: Վորսորդները անխնա բռնում և սպանում եյին ջալամներին, 15, 16 սպիտակ փետուրները հանում, մնացյալը դեն ձգում:

Ել ինչ ասես չեյին անում, վոր Հերոսին ձեռք ձգեն: Շատ դժվար եր թշնամին դիմեց խորամանկության:

Յերբ ընկերների հետ Հերոսը ջրի յեր գնացել: Ծարավը հագեցնելով, մարմինը զովացնելուց հետո վերադառնում եյին, յերբ ջրից փոչ հեռու հատ-հատ յերևացող ծառերի արանքում մի նոր ջալամ յերևաց:

Ջրին մոտ գնալիս այդ կողմերում ուրիշ ջալամ չկար, իրանք եյին միայն, բայց հիմա հայտնվեց մեկը: Վերտեղից եր այդպես մենակ յեկել: Նորեկը չեր շարժվում տեղից, միայն գլուխը դարմանալի կերպով դիք պահած աջ ու ձախ եր թեքում: Յերբ նորեկն զգաց, վոր իրան տեսան, փոքր ինչ մոտեցավ ու կանգ առավ: Ջալամները հետաքրքրվեցին: Հերոսն ել ցանկացավ նորեկի հետ ծանոթանալ: Ընկերներից մեկն շտապեց առաջինը ծանոթանալ: արագ քայլերով մոտեցավ անծանոթին և յերբ շատ եր մոտեցել, հանկարծ վախեցած կանգ առավ տեղում, գլուխը առաջ տարավ նորեկին լավ հասկանալու համար: Նրա յերկյուղն իզուր չեր: հազիվ ուզեց յետ դառնալ, հանկարծ նորեկ ջալամի թևերի տակից թուճավոր նետը սլացավ ու խրվեց ջալամի կուրծքը: Ջալամը գլորվեց: Հերոսը իսկույն զգաց վտանգը, յետ վազեց, սկսեց փախչել: Մի ուրիշ ջալամ ել մահամերձ ընկավ գետին: Թշնամին վաղուց հետեւել եր նրանց: Յերբ կենդանի մնացած ջալամներն անհետացան, նորեկ կեղծ ջալամի խրտվիլակի տակից յերևաց Աֆրիկայի վայրենի սև բնակիչ վորսորդը: Խրտվիլակը դեն ձգելով վաղեց թուճավոր նետերով սպանված ջալամների մոտ և սկսեց հանել նրանց սպիտակ փետուրները:

— Յերեսուն փետուր, այդ շատ լավ յեղավ, բայց ելի նրան չհաջողվեց սպանել — ասաց վայրենի վորսորդը, նայելով անհետացած Հերոսի կողմը: — ելի այն գեղեցիկ ջալամը ձեռքիցս փախավ: Վոչինչ, հանգիստ չեմ թողնի նրան, մինչև վոր չբռնեմ: Ինչ ել լինի, պիտի ձեռքս ընկնի:

Մենակ թափառում եր Հերոսը: Քանի-քանի անգամ զրկվեց ընկերներից: Հազիվ յերկուսի, յերեքի հետ ընկերացավ, բայց փորձանքի միջոցին, թշնամու հարձակման ժամանակ զրկվում եր նրանցից ու մենակ մնում: Նրա թշնամիները շատ եյին: Ամեն մի խշոց, ամեն կասկածելի ձայն ստիպում եր զգուշանալու: Բավական եր թեթև մի շշուկ, իսկույն գլուխը կբարձրացներ, ուշադրությամբ հորիզոնը կուսումնասիրեր, շրջապատը կդիտեր:

Ինչ կյանք եր հիմա նրա կյանքը: Գիշատիչ կենդանիներից բիշ չեր անհանգստություն կրում: Յեթե միայն այդ լիներ, ելի մի կերպ կարելի յեր ապրել, գոնե կենդանին շատ անգամ չեր համարձակվում մոտենալու Հերոսին, իսկ հեռվից նա փասել անկարող եր:

Բայց արի ու մարդու խորամանկությունից ազատվիր, Հեշտ բան չեր այդ: Այնպիսի ժամանակներ եյին սկսվել, վոր թշնամին — մարդը առանց մոտենալու, հեռվից անխնա կոտորում եր նրանց: Սպիտակ փետուրների համար քանի-քանի ջալամների կյանք եյին վոչընչացրել:

Ու բայցում եր մեն-մենակ Հերոսը: Մենակ և տը-
խուր: Ընկեր չուներ: Ընկերներով ավելի ապահով կլի-
ներ. իսկ հիմա ամեն մի բռնակ սիրտը թրթռում եր
յերկյուղից: Չիմացավ, թե ինչպես մոտեցավ յերկա-
թուղուն, վոր նոր շինվել եր Աֆրիկայի այդ մասում:
Չարմացավ: Կտցահարեց փայլուն կարծր յերկաթը,
բայց յերկաթուղագիծը չեր ընկճվում կտուցի հարվա-
ծից: Գնաց գծի ուղղությամբ: Հեռվում, դիմացից մի
անսովոր բան սուլեց, խշշաց, գետնի վրայից սպիտակ
քուլաներ ժայթքեցին դեպի կապուտակ յերկինքը:


Հերոսն առաջին անգամ եր լսում այդ սուլոցը,
առաջին անգամ եր տեսնում անհասկանալի սպիտակ
քուլաները: Վշտոցը բանի գնում՝ ավելի լսելի յեր դառ-
նում: Ջայլամը տեղում մեխված, զարմանքով նայում
եր մի գորշ կետի, վոր գծի ուղղությամբ առաջ եր
գալիս, մեծանում ու ավելի բարձր աղմկում:

Չփախավ: Նոր տեսակի թշնամի յեր հայտնվել:
Սկսեց անհանգստությունից յերեքալ տեղում, բայց
չհեռացավ: Չարմանալի թշնամին ուղիղ վազում եր
Հերոսի վրա, մեծանում հա մեծանում: Հերոսը զայ-
րացավ, թեքըր թափահարեց, տեղում միքանի կիսա-
պտույտ գործեց և անհամբերությունից փոքերն սկսեց
գետնին խփել:

Թշնամին մեծանում եր. նրա վշտոցը սաստկանում
և սպիտակ քուլաները շատանում եյին, ժայթքում վե-
րևից, ցածից: Հանկարծ բարձր և տկողաբար ձայնեց
թշնամին: Հերոսը դողաց, զայրույթից թե յերկյուղից
ինքն իրեն կորցրեց և մի պահ, միևնույն տեղում
կանգնած, չգիտեր ինչ անել:

Բոլոր ուժերը հավաքելով, բարձրաձայն ճշարով,

թեքըր բաց թողած՝ նետի արագությամբ վազեց, սլա-
ցավ ուղիղ թշնամու դեմ:



Տարածությունը նրա և շոգեկառքի միջև այնքան
փոքր եր, վոր անկարելի յեր վտանգի առաջն առնել:
Շոգեկառքը յերկար սուլելով անցավ առաջ առանց
դադարի:

Լավեց մի սոսկալի ճիչ... Լուռ անապատի հեովից
արձագանգը միայն պատասխանեց...

Յեվ հերոսը չկար այլևս...


Հետզհետե գնացքը փոքրացավ, մեղմացավ նրա
վշտոցը: Շուտով գնացքն անհետացավ:

Յերկաթուղին եր միայն, վոր փայլվում եր անա-
պատի շիկացած մակերևույթի յերեսին՝ այրող արևի
ճառագայթների տակ...

251x


251

Handwritten text at the top of the left page, possibly a title or header.



Main body of handwritten text on the left page, arranged in several paragraphs.

Handwritten text at the bottom of the left page, possibly a footer or a concluding note.



ԳԻՆԸ 20 ԿՈՊ. ՉԵՐՎ.



7719

891.995

7-13